ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-15/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 07.02.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.02.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը, որը գտնվում է ք. Երևան, Տերյան 105 հասցեում, սույն թվականի հունվարի 25-ին հայտարարել է գնման ընթացակարգ՝ իր ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ծառայությունների ձեռքբերման գծով (ծածկագիրը ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2):

Նշված ծածկագրով հրավերի մեջ որպես մասնագիտական փորձառության հավաստում նշվել է, որ... «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր (Հավելված 3.1): Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Նմանատիպ են համարվում Աուդիտորական ծառայությունների մատուցումը:

2) Կազմակերպությունը պետք է ունենա ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում աուդիտ իրականացնելու առնվազը 2 փորձ՝ (պայմանագրի պատճենները պարտադիր կցել) (Հավելված 3.1)

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետերով նախատեսված պահանջները:

Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Ընկերությունը նշել է, որ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել երկու աուդիտորական ընկերություններ՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն և «Էն-Աուդիտ» ՍՊԸ-ն, որոնք ներկայացրել են համապատասխանաբար՝ 988,400 դրամ ներառյալ ԱԱՀ և 1,000,000 դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի նախահաշվային գինը կազմել է 1,200,000 ՀՀ դրամ:

«ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. թիվ 2 արձանագրության մեջ նշվել է, որ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում բացակայում է մասնագիտական փորձառությունը հավաստող՝ ԲՈՒՀ-ում իրականացրած աուդիտի պայմանագրի պատճեններից մեկը և հիմք ընդունելով այդ փաստը ղեկավարվելով հրավերի 7.2 կետով առաջարկվել է շտկել արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները մինչև 02.02.2017թ.:

Հանձնաժողովի 03.02.2017թ. արձանագրության մեջ նշվել է, որ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է «Արդարադատության Ակադեմիա» ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրի և ծառայությունների մատուցման կատարողական ակտի պատճենը, ՀԱՊՀ հիմնադրամի 2015թ. ֆինանսական հաշվետվության աուդիտի ծառայությունների մատուցման կատարողական ակտը:

Հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշել է մերժել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ին հայտը, քանի որ «Արդարադատության Ակադեմիաե ՊՈԱԿ չի հանդիսանում ԲՈՒՀ, հետևաբար որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, իսկ ընտրված մասնակից է ճանաչել «Էն-Աուդիտ» ՍՊԸ-ին և ներկայացնել պայմանագրի կնքելու առաջարկ:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ, 8-րդ և 31-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 65-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ մասնակիցը, որպես մասնագիտական փորձառության որակավորման չափանիշ պետք է ունենա համանման նմանատիպ աուդիտորական ծառայությունների

մատուցման պայմանագրեր, ինչպես նաև Կազմակերպությունը պետք է ունենա ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում աուդիտ իրականացնելու առնվազը 2 փորձ:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի նախահաշվային գինը կազմել է 1,200,000 ՀՀ դրամ (չի գերազանցել 5,000,000 ՀՀ դրամը):

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն նշել է, որ Պատվիրատուն հրավերով նման պահանջ նախատեսելով, կոպտորեն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 65-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հանաջները, քանի որ նման պահանջը խտրական է, արհեստականորեն սահմանափակել է մասնակիցների տվյալ գնման ընթացակարգին մասնակցելու հնարավորությունը, ընդլայնումը սահմանափակել է նույնպես, տվյալ սահմանումը գնման գործընթացի միասնական կանոններին չի համապատասխանում, մրցակցային համարվել չի կարող, չի ապահովվել գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունը:

Բացի այդ Կարգի 65-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը (5,000,000 ՀՀ դրամ), ապա մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին, սակայն պատվիրատուն անտեսել է ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված սահմանված պահանջը, և գնման ընթացակարգի հրավերով սահմանել է այն դրույթը, որ կազմակերպությունը պետք է ունենա ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում աուդիտ իրականացնելու առնվազը 2 փորձ և պարտավոր է ներկայացնել նմանատիպ կատարված պայմանագրեր որպես հավաստում, ինչն էլ ինքնին հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվաած գրեթե բոլոր պահանջներին:

Ընկերությունը նշել է, որ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն որպես համանման նմանատիպ պայմանագրեր ներկայացրել է թիվ 182 դպրոց հիմնադրամի, «Արդարադատության Ակադեմի» ՊՈԱԿ-ի և «Պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի հետ կնքված պայմանագրերը, սակայն պատվիրատուն ոչ դպրոցի, ոչ ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրերը չի համարել ԲՈՒՀ-ական (կրթական), որն առնվազն անհասկանալի է,

քանի որ եթե դպրոցը չի կարող համարվել կրթական հաստատություն, իսկ Արդարադատության Ակադեմիան բուհական, ապա անհասկանալի է ինչ նկատի ունի Պատվիրատուն, եթե իրենք դպրոցը չեն համարում կրթական հաստատություն: Այնինչ և դպրոցը և Պոլիտեխնիկական համալսարանը համարվում են հիմնադրամներ, իսկ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերից մեկը՝ որը հանդիսանում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ կնքվածը, նույնպես հիմնադրամ է, որը ընդունվել է պատվիրատուի կողմից որպես ԲՈՒՀ-ական կրթական նմանատիպ պայմանագիր, քանի որ վերջինիս կողմից ընդունվում է մեկ հիմնադրամի համար կատարված պայմանագիրը և չի ընդունվում մեկ այլ հիմնադրամի համար կատարված պայմանագիրը, որը կրկին անգամ խոսում է պատվիրատուի ոչ անաչառ և խտրական մոտեցման համար, ինչի արդյուքնում խախտել են Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված պահանջները, քանի որ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ հայտը պետք է գնահատվեր հրավերով սահմանված կարգով:

Հանձնաժողովի 03.02.2017թ. արձանագրության մեջ նշվել է, որ ընտրված մասնակից է ճանաչել «Էն-Աուդիտ» ՍՊԸ և ներկայացրել է պայմանագրի կնքելու առաջարկ, որի ադրյունքում խախտվել է Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը, քանի որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թե 01.02.2017թ. և թե 03.02.2017թ. արձանագրությունների մեջ ընդհանրապես չի նշվել ընտրված մասնակից ճանաչված «Էն-Աուդիտ» ՍՊԸ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, չի նշվել ինչ պայմանագրեր է ներկայացվել, արդյոք դրանք պատշաճ կատարված են եղել, և արդյոք դրանք ԲՈՒՀ-ական կրթական են թե ոչ:

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել գնումների ընթացակարգը, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը, այդ թվում նաև պայմանագրի կնքման գործընթացը, քանի որ ընթացակարգը շարունակելու կամ պայմանագիր կնքելու դեպքում «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն կարող է կրել վնասներ, իսկ բողոքը բավարարելու դեպքում կարող է առաջացնել անհարկի խոչընդոտներ ընթացակարգի հետագա շարունակությունն և Գնումների բողոքարկման խորհրդի որոշման իրականացումը ապահովելու համար, ինչպես նաև նդրել է դադարեցնել «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 03.02.2017թ. արձանագրությամբ կայացված «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու, «Էն-Աուդիտ» ՍՊԸ-ի ընտրված մասնակից

ճանաչելու, իսկ պայնագիր կնքելու որոշման առկայության դեպքում նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ի լրումն 07.02.2017թ. ներկայացված բողոքի, Ընկերությունը 23.02.2017թ. գրությամբ խնդրել է որպես բողոքով ներկայացված պահանջ՝ «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 03.02.2017թ. արձանագրությամբ կայացված «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու, «Էն-Աուդիտ» ՍՊԸ-ի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները դադարեցնելու փոխարեն՝ դադարեցնել «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նույն ընթացակարգը հայտարարելու մասին որոշումը:

2. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), ի պատասխան Կենտրոնի 08.02.2017թ. թիվ 01/04.2/382-17 գրության, 10.02.2017թ. թիվ 01/13.1/252-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ հայտի հրավերով պահանջվում է, որ կազմակերպությունը պետք է ունենա ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում աուդիտ իրականացնելու առնվազն 2 փորձ (պայմանագրի պատճեները պարտադիր կցել) (հավելված 3,1):

Բողոքաբերի տեսակետով՝ տարաբնույթ (երկակի) ընկալումը հայտում նշված «ԲՈՒՀ-ական (կրթական)» եզրույթին, հիմնավորված չէ, քանի որ՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն, «...Այն պայմանների թվարկման ժամանակ, երբ բոլոր թվարկված պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով: Այս դեպքում պետք է կիրառվի «կամ» շաղկապը»: Ներկայացված պահանջում կրթական բառը օգտագործվել է փակագծերի մեջ: Պայմանագրի կատարման համար պահանջվող մասնագիտական փորձառության նվազագույն պահանջների 1-ին կետում ԲՈՒՀ-ական (կրթական) եզրույթում «կրթական» բառի առկայությունը ոչ թե պայման է, այլ բացահայտում է բարձրագույն ուսումնական

հաստատության մասնագիտական հիմնական կրթական ծրագիրը, համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի լույսի ներքո «կրթական» բառը, որպես, պայման չի կարող դիտարկվել առանձին, քանզի նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, «1. Կրթական ծրագիրը սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը:

Բողոքում «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն ճիշտ չի նշել ոչ իր կողմից ներկայացված գնանշման առաջարկի գումարը (նշել է 988 400 ՀՀ դրամ, այնինչ իրականում ներկայացրել է 998 400 ՀՀ դրամ, ոչ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2 ծածկագրով ընթացակարգի նախահաշվային գինը, իրականում այն կազմել է 1 400 000ՀՀ դրամ, իր կողմից բերված 1 200 000-ի փոխարեն:

Ինչ վերաբերում է «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի ԲՈՒՀ հանդիսանալու հանգամանքին, ապա այն ներառված չէ ՀՀ-ում գործող ԲՈՒՀ-երի ցանկում, չունի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր իրականացնելու լիցենզիաներ, ուստի չի բավարարում հայտով նշված պահանջին (կից ներկայացնում եմ ՀՀ Կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի գրությունը), ինչը հիմնավորված է նաև «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի կանոնադրության 11-րդ կետի «Ակադեմիայի գործունեության նպատակներն են՝ 1) դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մեջ դատավորի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումը, մասնագիտական գիտելիքների ընդլայնումը. . . »

Ինչ վերաբերում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011թ-ի փետրվարի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» մասին թիվ 168-Ն որոշմանը, պետք է նշենք, որ վկայակոչված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն պատվիրատու կարող են լինել Հանրային կազմակերպությունները, և համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 2016թ-ի մարտի 16-ին հղված թիվ 1/73-1/9756-16 գրության՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամը հանդիսանում է հանրային կազմակերպություն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը 2016թ-ի հունիսի 3-ին հաստատել է գնումների կարգը, ինչն, ի դեպ, հրապարակված է նաև

“www.gnumner.am” պաշտոնական կայք-էջում: Հետևաբար բողոքաբերի նշված բոլոր հղումներն ու վկայակոչումները կարգի խախտման վերաբերյալ տեղին չեն:

3. ԳԲԽ-15/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-15/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգ:

2. «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի երկրորդ բաժնում՝ մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգի համաձայն՝ «Մասնագիտական փորձառությունե չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) ***առնվազն մեկ պայմանագիր*** (Հավելված 3.1): Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի ***հիսուն տոկոսից***, որից ***առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում*** մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Նմանատիպ են համարվում ***Աուդիտորական ծառայությունների*** մատուցումը:

2) Կազմակերպությունը պետք է ունենա ***ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում աուդիտ իրականացնելու առնվազը 2 փորձ՝*** (պայմանագրի պատճենները պարտադիր կցել) (Հավելված 3.1)

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետերով նախատեսված պահանջները:

Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

2. «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 25.01.2017թ. թիվ 1 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի մասնակիցների գնառաջարկի հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստ է հրավիրվել հրավերի հրապարակման օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն և «Էն-Աուդիտ» ՍՊԸ-ն:

4. Նույն արձանագրության 2.2 կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում, որի մեջ բացակայում է ***մասնագիտական փորձառությունը*** հավաստող ԲՈՒՀ-ում իրականացրած աուդիտի պայմանագրի պատճեններից մեկը (հրավերով սահմանված 2 փորձառություններից միայն մեկը), ինչի արդյունքում հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ին առաջարկել մինչև 2017թ. փետրվարի 2-ը ժամը 17:30-ը շտկել անհամապատաս-խանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են «Արդարադատության Ակադեմիա» ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագիրը և ծառայությունների մատուցման կատարողական ակտի պատճենը, ՀԱՊՀ հիմնադրամի

2015թ. ֆինանսական հաշվետվության աուդիտի ծառայությունների մատուցման կատարողական ակտը:

Նույն արձանագրության 1-ին ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Արդարադատության Ակադեմիա» ՊՈԱԿ-ը չի հանդիսանում ԲՈՒՀ, հետևաբար որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակից ճանաչել «Էն-Աուդիտ» ՍՊԸ-ին, իսկ 3-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցին կարգի 13.13 կետի համաձայն ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

4. ԳԲԽ-17/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 07.02.2017թ. ներկայացրած բողոքը և բողոքին կից ներկայցված փաստաթղթերը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 10.02.2017թ. թիվ 01/13.1/252-17 գրությունը և գրությանը կից ներկայցված փաստաթղթերը, «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների՝ բողոքարկումն իրականացվում է սույն օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների կատարման կարգերը չեն կարող հակասել նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ

գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ ավիասպասարկման ծառայությունները կամ, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Պատվիրատուն Հրավերի առաջին մասի երկրորդ բաժնում սահմանել է մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը, որի համաձայն՝ Մասնագիտական փորձառությունե չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) ***առնվազն մեկ պայմանագիր*** (Հավելված 3.1): Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում

մասնակցի ներկայացրած գնային առաջարկի ***հիսուն տոկոսից***, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Նմանատիպ են համարվում ***Աուդիտորական ծառայությունների*** մատուցումը:

2) Կազմակերպությունը պետք է ունենա ***ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում աուդիտ իրականացնելու առնվազը 2 փորձ***՝ (պայմանագրի պատճենները պարտադիր կցել):

Այսպիսով, Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Օրենքի 3-րդ հոդածով սահմանված պահանջների խախտում, քանի որ «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով որպես մասնագիտական փորձառության չափանիշ, նախ, սահմանվել է, որ գնման ընթացակարգի մասնակիցները հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինեն համանման (նմանատիպ) ***առնվազն մեկ պայմանագիր***, որը պետք է պակաս չլինի մասնակցի ներկայացրած գնային առաջարկի ***հիսուն տոկոսից,*** իսկ այնուհետև հաջորդ կետով նշվել է, որ կազմակերպությունը պետք է ունենա ***ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում աուդիտ իրականացնելու առնվազը 2 փորձ,*** ինչի արդյունքում հրավերով նախատեսված նման պահանջի առկայության դեպքում արհեստականորեն սահմանափակվում է մասնակիցների տվյալ գնման ընթացակարգին մասնակցելու հնարավորությանը և ընդլայնումը, չի ապահովում մյուս մասնակիցների համար գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունը՝ ինչի արդյունքում ստեղծվում է ոչ մրցակցային պայմաններ:

Ավելիին, Պատվիրատուն Հրավերում հստակ նշել է, որ նմանատիպ են համարվում հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) ***առնվազն մեկ աուդիտորական ծառայությունների*** մատուցման պայմանագիրը, որն էլ իր հերթին հակասում է նույն հրավերով սահմանված այն դրույթին, որ կազմակերպությունը պետք է ունենա ***ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում աուդիտ իրականացնելու առնվազը 2 փորձ,*** ինչն էլ իր հերթին առաջացրել է Օրենքի 3-րդ հոդվածով և Կարգի 65-րդ կետով սահմանված պահանջների խախտում:

Կենտրոնը գտնում է, որ Հրավերով սահմանված նման պայմանների առկայություն պարագայում գնման ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Ելնելով վերոգրյալից՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-15/17 բողոքը քննող հանձնաժողովին առաջարկում է «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 07.02.2017թ. բողոքը բավարարել՝ դադարեցնել «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգը հայտարարելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ, ԳԲԽ-15/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան